

«ՍԻՎԻԼԻԹԱՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՌԴԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական հաշվետվություններ	
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Սիվիլիթաս» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սիվիլիթաս» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2024թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄՍԻ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Թաթուլ Մովսիսյան

Գլխավոր տնօրեն/ Առաջադրանքի ղեկավար



30 հունիսի, 2025թ.

ք.Երևան, Պ.Սևակի 8

«Սիվիլիթաս» հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

‘000 դրամ

Ակտիվներ

Հիմնական միջոցներ

Ոչ նյութական ակտիվներ

Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ

Պաշարներ

Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար

Առևտրական դեբիտորական պարտքեր

Այլ ընթացիկ հարկային ակտիվներ

Արժեթղթեր

Դրամական միջոցներ

Այլ ընթացիկ ակտիվներ

Ընթացիկ ակտիվներ

Ընդամենը ընթացիկ ակտիվներ

Սեփական կապիտալ և պարտավորություններ

Հիմնադիրների ներդրումներ

Կուտակված շահույթ

Ընդամենը սեփական կապիտալ

Ոչ ընթացիկ շնորհներ

Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ

Վարկեր

Փոխառություններ

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ

Աշխատավարձի և այլ կարճ. հատուց-ի գծով պարտ-թյուններ

Ընթացիկ շնորհներ

Այլ պարտավորություն

Ընդամենը ընթացիկ պարտավորություններ

Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ

Ծանոթ.	31/12/24	31/12/23
6	50,813	64,924
	1,490	1,791
	52,303	66,715
7	41	33
8	421	187
9	387	877
18	-	42
10	6,125	-
11	86,262	18,729
12	84,510	144,176
	177,746	164,044
	230,049	230,759
13	500	500
13	9,467	5,415
	9,967	5,915
14	46,179	66,715
	46,179	66,715
15	638	1,198
16	105	28,346
17	24,053	31,445
18	8,221	163
19	36,080	49,134
20	104,707	47,636
	99	207
	173,903	158,129
	230,049	230,759

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

«Բի-Դի-Օ Ըքստենթիոնգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն



Ա. Պողիկեան

Ն. Նուրոյան

«Սիվիլիթաս» հիմնադրամ
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

‘000 դրամ

Հասույթ

Վաճառքի ինքնարժեք

Համախառն շահույթ

Դրամաշնորհներից եկամուտ

Շնորհների գծով ծրագրային ծախսեր

Շնորհներից արդյունք

Այլ եկամուտներ

Իրացման ծախսեր

Վարչական ծախսեր

Այլ ծախսեր

Գործառնական շահույթ (վնաս)

Ֆինանսական ծախսեր

Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)

Շահույթ մինչև հարկումը

Շահութահարկի գծով ծախս

Զուտ շահույթ

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

«ԲԻ-ԴԻ-Օ Ըբաունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն

Ծանոթ.	2024	2023
21	48,887	18,938
21	(43,025)	(16,600)
	5,862	2,338
22	369,127	346,533
22	(286,545)	(296,589)
	82,582	49,944
23	428	9,273
	(11,108)	(10,521)
	(57,894)	(59,883)
23	(12,612)	(3,800)
	7,258	(12,650)
24	(140)	(190)
	(2,996)	17,009
	4,122	4,169
25	(70)	-
	4,052	4,169



Ա. Պողիկեան

Ն. Նուրոյան

«Միվիլիթաս» հիմնադրամ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

‘000 դրամ

	Ծանոթ.	Հիմնադիրների ներդրումներ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	13	500	1,246	1,746
Զուտ շահույթ		-	4,169	4,169
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.		500	5,415	5,915
Զուտ շահույթ		-	4,052	4,052
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.		500	9,467	9,967

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

«Բի-Դի-Օ Ընթառնություն, Թաքս ընդ Լիզըլ» ՓԲԸ-ի
 Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն



Ա. Պողիկեան

Ն. Նուրոյան


‘000 դրամ

	2024	2023
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
դրամաշնորհներից	440,780	396,428
վաճառքներից	40,999	18,982
այլ մուտքեր	-	12
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից	(74,542)	(67,030)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից	(279,522)	(296,098)
շահութահարկի վճարումից	-	(1,591)
այլ հարկեր, պարտադիր վճարների վճարումից	(7,475)	(2,283)
ծրագրային և այլ	(37,258)	(34,826)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	82,982	13,593
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	(8,923)	(7,080)
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	(8,923)	(7,080)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
վարկերի, փոխառությունների ստացումից	6,064	17,431
վարկերի, փոխառությունների մարումից	(16,965)	(23,430)
տոկոսների վճարումից	(140)	(184)
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	(11,041)	(6,183)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	63,018	329
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	4,515	15,680
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի	18,729	2,719
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի	86,262	18,729

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

«Բի-Դի-Օ Ըբաունթինգ, Թաքս ընդ Լիզըլ» ՓԲԸ-ի
 Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն



Ա. Պողիկեան

Ն. Նուրոյան